

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԱ ԷՎՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 412-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 դեկտեմբերի 2012թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ս. Նովհաննիսյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Նամբարձումյանի եւ նույն բաժնի առաջապար մասնագետ Ն. Սարդարյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա՝ Նայասրանի Նանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Էվոյանի՝ 27.08.2012թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցողի 03.12.2012թ. թիվ ՄԴԱ-13 գրությամբ ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի նախագահից պահանջվել է փասնօրյա ժամկետում ՆՏ սահմանադրական դատարանին փորձադրել մեկ փարվա կտրվածքով բոլոր դատական ակտերի՝ դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին եւ օրինական ներկայացուցիչներին, մեղադրողին, փոժողին եւ նրա ներկայացուցչին, ինչպես նաեւ քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պարասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկման ժամկետների մասին ամփոփ փեղեկավորություն:

Սահմանադրական դատարանում 13.12.2012թ. մուտքագրվել է ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի 12.12.2012թ. թիվ ԴԴ-8-Ե-18019/12 գրությունը, որով հայտնվել է հետևյալը. «Նկարի ունենալով, որ 2012թ.-ին ՆՏ վերաքննիչ քրեական դատարանում կայացվել է 1046 գործն ըստ էության լուծող դատական ակտ, 10-օրյա ժամկետում Ձեր խնդրանքը բավարարել հնարավոր չէ:

Միաժամանակ հայտնվում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 402 հոդ. 2.-րդ մասով սահմանված 3 օրվա ժամկետը ողջամիտ չէ եւ այդ ժամկետի պահպանումը հաճախակի դժվարություններ է առաջացնում»:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի 12.12.2012թ. թիվ ԴԴ-8-Ե-18019/12 գրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտերի բողոքարկման ժամկետները» վերաբերյալ 412-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Վճռաբեկ բողոք կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին. դիմողի մասնակցությամբ մահվան ելքով ավարտված կապակցությամբ 19.08.2011 թվականին Սպիտակի քննչական բաժնի կողմից ՆՏ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հարկանիշներով հարուցվել է քրեական գործ, իսկ 16.11.2011 թվականին որոշում է կայացվել դիմողին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, եւ նրան մեղադրանք է առաջադրվել: 24.03.2012 թվականին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ եւ դիմողին մեղավոր ճանաչելով՝ դատապարտել է ազատազրկման 2 փարի ժամկետով:

ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2012 թվականի որոշմամբ մերժվել է դիմողի վերաքննիչ բողոքը եւ ուժի մեջ թողնվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավճիռը: Նշված որոշումը դիմողն ստացել է 15.06.2012 թվականին, իսկ փոստում մուտք է եղել 14.06.2012 թվականին:

Վճռաբեկ բողոքը բերվել է 14.07.2012 թվականին /որոշումն արանալուց 29 օր հետո/: 20.08.2012 թվականին ՆՏ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել դիմողի վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ այն պարճառաբանությամբ, որ վճռաբեկ բողոքը ժամկետանց է, եւ բաց է թողնվել վճռաբեկ բողոք բերելու համար ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետը:

3. Վիճարկելով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ «... գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում» դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՆՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին եւ 20-րդ հոդվածի 3-րդ մասին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը գտնում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը եւ դրա հետ փոխկապակցված՝

նույն հոդվածի 2-րդ մասը միմյանց հեպ համադրության մեջ առաջացնում են կրկնակի հակասություն, ինչով էլ հանգեցնում են իրավական անորոշության: Ըստ դիմողի՝ նշված հակասությունները հանգում են հետևյալին՝ «Առաջին հակասությունը վերաբերում է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, որոնցից մեկը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու համար դատական ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետ, իսկ մյուսը՝ անձի վիճակը բարելավող հիմքով վճռաբեկ բողոք բերելու համար որեւիցե ժամանակային սահմանափակում չի նախատեսում: Երկրորդ հակասությունը վերաբերում է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասում առկա երկու դրույթներին, երբ գործն ըստ էության լուծող վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դատական ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դատական ակտի սրացման օրվանից 15-օրյա ժամկետում»: Դիմողը գտնում է, որ այս երկու հակասություններն սպեղծել են իրավական անորոշություն, որը հակասում է իրավական որոշակիության միջազգային սկզբունքին և ՆՏ Սահմանադրության՝ վերը թվարկված հոդվածներին:

Վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հակասահմանադրականությունը դիմողը հիմնավորում է նաև այն հանգամանքով, որ դատական ակտը հասցեատիրոջն է առաքվում փոստով, ինչը փետում է երկար ժամանակ, և արհեստականորեն կրճատվում է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը:

4. Պարասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՆՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18 և 19-րդ հոդվածների 1-ին մասերի և 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պարասխանող կողմը հղում է կատարում «Մամիկոնյանն ընդդեմ Նայասրանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում արտահայտված այն եզրահանգմանը, համաձայն որի՝ որպեսզի դատարանի մարչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պարասխանող կողմը հղում է կատարում նաև ՆՏ սահմանադրական դատարանի ՍԴՌ-1052

որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ սպորտադաս դասարանի դասական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դասական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դասական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դասական պաշտպանության համար: Ըստ այդմ, պարասխանողը գրնում է, որ ՏՏ քրեական դատարանի օրենսգրքի 174-րդ հոդվածը, ինչպես նաև 402-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրել են երաշխիքներ, որոնք ապահովում են անձի՝ դասական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այս կապակցությամբ թեև դասական ակտն ուղարկվել է ժամանակի առումով համարժեք չէ դասական ակտը հանձնելուն, այնուամենայնիվ, մեկամսյա ժամկետը բավարար է հիմնավոր բողոք բերելու համար:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ օրենսգրքի ներքին հակասությունների խնդրին՝ պարասխանողը նշում է, որ օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է բողոքարկման ընդհանուր կանոն, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը հանդես է գալիս որպես ընդհանուր կանոնից բացառություն եւ համարվում դասական ակտի վերանայման բացառիկ եղանակ:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ գործն ըստ էության լուծող դասական ակտերի համեմատ գործն ըստ էության չլուծող դասական ակտերի համար բողոքարկման կրճատ ժամկետներ սահմանված լինելու հիմնախնդրին՝ պարասխանողը նշում է, որ գործն ըստ էության լուծող դասական ակտերի համեմատ գործն ըստ էության չլուծող դասական ակտերի համար բողոքարկման կրճատ ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում արագացնել գործն ըստ էության չլուծող դասական ակտերի վերաբերյալ վեճերի լուծումը, որն ուղղված է քրեական դատարանի օրենսգրքի սահմանում ընթացքի ապահովմանը: Այդ հանգամանքով է պայմանավորված գործն ըստ էության չլուծող դասական ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկը դասական ակտն ստանալու պահից:

5. Նաշվի առնելով կողմերի դիրքորոշումները՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների համադրությամբ:

ՏՏ քրեական դատարանի օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բողոքարկման ընդհանուր ժամկետները եւ վերաբերում է օրինական ուժի

մեջ չմտած դատական ակտերին, մինչդեռ 2-րդ մասը վերաբերում է նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին եւ նախատեսում է բացառություն բողոքարկման ընդհանուր կանոններից, ներառյալ ժամկետները՝ ամրագրելով բողոքարկման հատուկ ժամկետներ միայն 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի համար:

**Վերջին հաշվով, օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը գտնվում են ընդհանուր եւ հատուկ կանոններ փոխհարաբերակցության մեջ:**

Ինչ վերաբերում է ժամկետների մեկնարկման պահերի միջև տարբերություններին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման ոլորտում ցանկացած տարբերակված մոտեցում չէ, որ հանգեցնում է հակասության: Իրավակարգավորման ոլորտում տարբերակված մոտեցումները կարող են հանգեցնել հակասության միայն այն դեպքում, երբ տարբերակված մոտեցումը ցուցաբերվում է նույն օբյեկտի, նույն հանգամանքների նկատմամբ՝ անկախ նրանից, թե համապատասխան իրավակարգավորումները սահմանված են նույն, թե տարբեր իրավական ակտերում: Քննարկվող իրավիճակում տարբերակված մոտեցում է ցուցաբերված տարբեր օբյեկտների շուրջ ծագող հարաբերություններ կարգավորող դրույթների նկատմամբ. մի դեպքում իրավակարգավորումը վերաբերում է գործն ըստ էության լուծող, մյուս դեպքում՝ գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերին: Իսկ նման տարբերակված մոտեցումն էլ ինքնին պայմանավորված է իրենց իսկ՝ անձանց շահերով, քանզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բողոքարկման ժամկետն օրենսդրի կողմից որոշվում է՝ հաշվի առնելով նաև դատական ակտի բնույթը. ակնհայտ է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտին ծանոթանալու եւ վճռաբեկ բողոք պատրաստելու համար անձին անհրաժեշտ է ավելի երկար ժամանակահատված, քան գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտի պարագայում:

Նիսբ ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, ինչպես նաև 412-րդ հոդվածի 1-ին մասի առաջին եւ երկրորդ նախադասությունների միջև ենթադրյալ ներքին հակասությունների հետ:

Այլ խնդիր է, թե Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների համարեքստում որքանով է երաշխավորված օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետներից օգտվելու իրավական հնարավորությունը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման եւ դատական ակտը հասցեատիրոջը փաստացիորեն հանձնելու պահերի միջև առկա ժամանակային գործոնը եւ դրանով պայմա-

նավորված՝ դատական ակտը վիճարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործի քննության շրջանակներում վկայակոչել իր՝ 16.10.2012թ. ՍԴՈ-1052 որոշումը, որով սահմանադրական դատարանը ՆՏ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել նմանապիպ իրավահարաբերություններ կարգավորող՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի փրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին: Մասնավորապես, սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշմամբ որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածն այնքանով, որքանով 402-րդ հոդվածի «ուղարկվում է» եզրույթը «երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի փրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վկայակոչված իրավական դիրքորոշման ուժով դատական ակտի բողոքարկման ժամկետը նույնիսկ **հրապարակման** պահից հաշվարկելու դեպքում օրենսգրքի 402-րդ հոդվածը՝ ՆՏ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ-1052 որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, երաշխավորում է անձի բողոքարկման իրավունքի արդյունավետությունը:

Տիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի առաջին եւ երկրորդ նախադասությունների միջեւ ենթադրյալ ներքին հակասության հետ, հիմնավոր չի համարում նաեւ վերը նշված հիմնավորմամբ:

6. Անդրադառնալով դիմողի բարձրացրած երկրորդ հիմնահարցին՝ կապված վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հիմնահարցը քննության առարկա է դարձել իր՝ 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ-1052 գործով: Նշված եւ սույն գործով քննության առարկաների միջեւ փարբերությունը կայանում է նրանում, որ սույն գործով դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցադրումը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկմանը, իսկ ՍԴՈ-1052 որոշումը վերաբերում էր գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերի

բողոքարկման կարգին: Այսուամենայնիվ, ՏՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես կիրառելի են սահմանադրական դատարանի ՄԴՌ-1052 որոշմամբ ամրագրված համապատասխան իրավական դիրքորոշումները:

Նարկ համարելով անդրադառնալ ՄԴՌ-1052 որոշման միայն եզրափակիչ մասում ամրագրված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր՝ վերը նշված որոշման եզրափակիչ մասում ՏՏ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վիճարկվող՝ հրապարակվելու պահից, դրույթը՝ «այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի փրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին...»:

Նույն որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ ԿՎԿՄ գործով վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված 402-րդ հոդվածը, **որպես ԿՎԿՄ գործով վիճարկվող դրույթի կիրառման ընթացքում անձի իրավունքների ապահովման երաշխիք**, ճանաչվել է ՏՏ Սահմանադրությանը համապատասխանող՝ «այնքանով, որքանով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի փրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»:

ՏՏ սահմանադրական դատարանի ՄԴՌ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համադրությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՏՏ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու եւ դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **ժամանակ** ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **եւ այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը փրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապարասխանում է Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՆՏ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի փրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին եւ վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ ճանաչվում է հարգելի:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՎՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 դեկտեմբերի 2012 թվականի  
ՄԴՈ- 1062